

**Յորդանանի Հաշիմական Թագաւոր
Ապտալա Պին Հիւսէյն
Հաստատագիր Կը Յանձնէ
Երուսաղէմի Նորընտիր Հայ Պատրիարքին**

Չորեքշաբթի, 10 Ապրիլ 2013-ին, կէսօրէ ետք ժամը 2-ին, Յորդանանի Նորին Վեհափառութիւն՝ Ապտալա Պին Հիւսէյն Հաշիմական Թագաւորը, իր պալատի դահլիճին մէջ ընդունեց Հայ Երուսաղէմի նորընտիր Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանը, զինք շնորհաւորելու եւ յանձնելու հաստատագիրը:

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր կ'ընկերանային Ս. Աթոռոյ Լուսարարապետ Գերշ. Տ Սեւան Արք. Ղարիպեան, Յորդանանի մէջ Պատրիարքական Փոխանորդ Գերշ. Տ. Վահան Արք. Թօփալեան եւ Հոգշ. Տ Գեղամ Ծ.Վրդ. Զաքարեան: Նորին Վեհափառութեան հետ ներկայ էին եւս, Պալատի Փրոթոքրոլի եւ Իսլամական Աուքաֆի պատասխանատու անձերը:

Նորին Վեհափառութիւնը իր շնորհաւորական խօսքին մէջ շեշտեց Երուսաղէմի Իսլամական եւ Քրիստոնէական Սրբատեղեաց անխախտ պահպանումն ու անոնց պաշտպանութիւնը: Հայ Երուսաղէմի Պատրիարքութիւնը ըլլալով տէրն ու տիրականը Տնօրինական Տեղեաց Սուրբ Երկրին մէջ՝ Յոյն Ուղղափառ Պատրիարքութեան եւ Ֆրանչիսկեան Լատին Միաբանութեան հետ, Նորին Վեհափառութիւնը անդրադարձաւ վերջերս Պաղեստինեան Պետութեան Նախագահ՝ Վսեմաշուք Մահմուտ Ապպասի եւ Հաշիմական Թագաւորութեան միջեւ ստորագրուած համաձայնագրին մասին, ըստ որում՝ Հաշիմական Թագաւորութիւնը պիտի շարունակէ մնալ Իսլամական եւ Քրիստոնէական Սրբատեղեաց պաշտպանը:

Պատրիարքական Ընտրութեան Հաստատագրի յանձնումէն ետք, Նորին Ամենապատուութիւնը իր շնորհակալական խօսքը յայտնեց Նորին Վեհափառութեան եւ խոստացաւ լաւագոյնս ընել յօգուտ Սրբատեղեաց, Երուսաղէմի, Պաղեստինի եւ Յորդանանի Հայ Համայնքներուն:

Նորին Վեհափառութեան հետ սոյն սիրալիր հանդիպումը իր եզրին հասաւ ողջագործմամբ եւ ցնոր տեսութեան ակնկալութիւններով:



Յորդանանի Հաշիմական Թագաւոր՝ Ապտալլա Պըն Հիւսէյն
Հաստատագիրը կը յանձնէ Նորընտիր Պատրիարք Սրբազան Հօր:

